Աջակցություն Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

Ուսուցողական այցելության զեկույց

ՀՍԳԻ Հայաստանի համար

Գործունեություն Ե.5
Ուսուցողական այցելություն Դանիայի վիճակագրություն

Առաքելությունը իրականացրել են՝

Գ. Գևորգյան, ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի անդամ

Գ. Մարտիրոսյան, ՀՀ ԱՎԾ Գների և միջազգային համադրումների բաժնի պետ

Մ. Երիցյան, ՀՀ ԱՎԾ Գների և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ

Լ. Աթոյան, Թվինինգ ծրագրի թարգմանչուհի

Դանիա, 11-15 Հունիսի, 2012

Դանիայի Վիճակագրություն

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն

Հեղինակների անունները, հասցեները և էլ. փոստի հասցեները

Գ, Գևորգյան, Վիճակագրության պետական խորհրդի անդամ

Գ. Մարտիրոսյան, Գների և միջազգային համադրումների բաժնի պետ

Մ. Երիցյան, Գների և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ

Ընդհանուր նկարագիր

Կոպենհագեն քաղաքում Դանիայի վիճակագրությունում իրականացված այցելության նպատակն էր ուսումնասիրել Դանիայի ՀՍԳԻ վիճակագրության համակարգը: Ուսուցողական այցելությունը կազմակերպվել էր ԵՄ Թվինինգ ծրագրի <<Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը>> Թվինինգի միջոցով ծրագրի շրջանակներում, բաղադրիչ Ե, <<Հարմոնիզացված գների ինդեքս>>: Գործունեության շնորհանդեղները և քննարկումները վերաբերվում էին ՀՀ ԱՎԾ համակարգում ՀՍԳԻ ներդրմանը:

Քննարկված թեմաները՝

- Դանիայի ՍԳԻ և ՀՍԳԻ վիճակագրության համակարգը
- ՀՍԳԻ համակարգի զարգացումները, հեռանկարները:
- Դանիայի ՍԳԻ/ՀՍԳԻ վիճակագրության արտադրման աշխատանքային գործ-ընթացները և փուլերը. մեթոդաբանության մշակումը և պահպանումը, տվյալների հավաքագրումը, որակի վերահսկումը, տվյալների տարածման ռազմավարությունը;
- Դանիայի գների և ազգային հաշիվների բաժնի միջև համագործակցությունը;
- Դանիայի ՍԳԻ/ՀՍԳԻ վիճակագրության գծով համագործակցությունը Եվրոստատի հետ, աշխատանքային խմբեր, հանձնարարականներ և այլն:
- Թվինինգ ծրագրի ՀՍԳԻ բաղադրիչի ՀՀ-ում ներկայիս կարգավիճակի ներկայացում, հնարավոր ճշգրտումներ, առաջիկա և հետագա քայլերի քննարկումներ:

Արդյունքները

Դանիայի վիճակագրական գրասենյակի միջազգային բաժնի աշխատակցուհին ներկայացրեց գրասենյակի աշխատակազմի ընդհանուր կառուցվածքը, հիմնական կանոնադրությունը, ինչպես նաև իրականացվող աշխատանքները, գործունեության ուղղությունները և պատմական զարգացումները:

Պրն. Մարտին Լարսենը ներկայացրեց Դանիայի ազգային ՍԳԻ-ի և ՀՍԳԻ-ի կազմման զարծընթացները և ներկա կարգավիճակը, ինչպես նաև սպասվող զարգացումները:

ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ պրն. Գ. Մարտիրոսյանը համառոտ ծանոթացրեց ՀՀ-ում ՍԳԻ-ի հաշվարկման ներդրմանը և պատմական զարգացումներին: Մանրամասնորեն ներկայացրեց ՀՀ-ում Թվինինգ ծրագրի ներքո ՀՍԳԻ-ի կազմման արդեն իսկ իրականացված աշխատանքները, ինչպես նաև ներկա իրավիճակը: Գ. Մարտիրոսյանը ներկայացրեց նաև կատարված աշխատանքները, որոնք իրականացվել են ՀՀ ԱՎԾ գների բաժնի կողմից Հայաստանին օժանդակող Եվրամիության երկրների փորձագետների վերջին առաքելությունից հետո: Ծանոթացրեց տնային

տնտեսությունների ծախսումների մասին տվյալների համակարգում COICOP դասակարգչի ներդրման ընթացիկ գործընթացին: Պարզաբանումներ տվեց դրանց սկզբնական տվյալների ամփոփման նախնական ժամանակացույցի վերաբերյալ: Նշվեցին ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի կողմից ՀՍԳԻ-ի կազմման համար առաջիկա ամիսներին նախատեսված աշխատանքները և դրանց իրականացման համար անհրաժեշտ գործողությունները:

Դանիայի վիճակագրության գրասենյակի գների բաժնի պետ տիկին Քիրստեն Բալլինգը ծանոթացրեց գների բաժնի աշխատակազմին, բաժնին վերապահված գործառույթներին: Ներկայացրեց գների հավաքագրման, վերլուծության և ինդեքսների հաշվարկման համար ընտրված ապրանքների և ծառայությունների տեսակների արդիականացման համար բաժնի աշխատակիցների միջև աշխատանքների պատասխանատվության բաշխվածությունը: Տիկ. Քիրստեն Բալլինգը ծանոթացրեց նաև ՀՍԳԻ-ի հաշվարկման սպասվելիք զարգացումներին և փոփոխություններին, ինչպիսին է օրինակ՝ մինչ օրս ՀՍԳԻ-ի հաշվարկներում չներառված COICOP դասակարգչի 04.2 դասի (Պայմանական հաշվարկված վարձավճար բնակարանի սեփականատիրոջ համար) ընդգրկումը:

Պրն. Մարտին Լարսենի կողմից ներկայացվեցին Դանիայի ազգային ՍԳԻ-ի, ինչպես նաև ՀՍԳԻ-ի համար գնային տվյալների հավաքագրման գործընթացը, պարբերականությունը, գնային տեղեկատվության հավաքագրում իրականացնող պատասխանատուները: Գնային ցուցանիշները հավաքագրվում են 4 հիմնական մեթոդներով

1. գին դիտարկող վարձու աշխատողների կողմից,
2. հաշվետվական ձևերի միջոցով, որոնք լրացվում են առևտրի, ծառայության կետերի սեփականատերերի կողմից,
3. կենտրոնացված (կենտրոնական գրասենյակի աշխատակիցների կողմից)
4. համացանցում տեղակայված տեղեկատվության արձանագրմամբ:

Ներկայացվեց գների հավաքագրման, մշակման և վերլուծության գործող համակարգը Դանիայի վիճակագրական գրասենյակում: Ծանոթացվեցին որակական հատկանիշների ճշգրտման մեթոդներին և գործընթացին, իրականացվող համակարգչային հաշվարկներին: Ներկայումս գրասենյակում ներդրված համակարգը հնարավորություն է տալիս բոլոր վերը նշված հաշվարկները և վերլուծությունները իրականացնել հատուկ մշակված համակարգչային ծրագրի միջոցով հաշվված ռոպեներում:

Դանիայի վիճակագրության փորձագետների կողմից հավանության արժանացան որակական հատկանիշների համար ՀՀ-ում կիրառվող մեթոդները, նշելով որ դրանք համապատասխանում են ՀՍԳԻ-ի պահանջվող մեթոդաբանությանը:

ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը մանրամասնորեն ներկայացրեց գների հավաքագրման առաջիկա օպտիմալացման ուղղությունները, որոնց հիմքում ընկած են ք. Երևանի ՍԳԻ-ի 2011-2012թթ. համար փորձնական հաշվարկները և վերակազմակերպած տվյալների հավաքագրման նախնական արդյունքները Հայաստանում:

ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ Մ Երիցյանի կողմից ներկայացվեցին վերլուծություններ վերամշակված COICOP դասակարգչի ներդրման առումով ՀՀ ՍԳԻ-ի և ՀՍԳԻ-ի համակարգում: Նշվեցին բացակա խմբերը, դասերը առկա ՍԳԻ-ի կազմում և դրանց ներառման կազմակերպչական գործընթացները: Հստակեցվեց դասակարգչի ներդրման ժամանակացույցը, կապված տնային տնտեսությունների ծախսերի մասին COICOP դասակարգչով վերաբաշխված տվյալների ստացման հետ: Ներկայացվեցին ՀՀ-ում գործող գնային տվյալների հավաքագրման և մշակման մեթոդները: Հստակ պարզաբանվեցին ապրանքների որակական ճշգրտումների համար ներդրված միջազգայնորեն ընդունված մեթոդները, կոնկրետ նշելով ապրանքախմբերի համար կիրառվող մեթոդը և ներկայացվեցին օրինակներ:

Մարտին Բերգերի և Գուրգեն Մարտիրոսյանի կողմից ցուցադրվեցին տվյալների տարածման և հրապարակման կարգավիճակները, որոնք ներդրված են համապատասխանորեն Դանիայի վիճակագրության և ՀՀ ԱՎԾ-ի համակարգերում:

Դանիայի փորձագետների կողմից գոհունակություն հայտնվեց ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակվող ՍԳԻ-ի տարածման ձևաչափի և ներկայացման կարգավիճակի վերաբերյալ: Դանիայի վիճակագրական գործակալությունից հանդիպումներ կայացան նաև գների վիճակագրության բաժնի աշխատակիցներ Յոնաս Միկկելսենի, Մարտին Լարսենի, ինչպես նաև հաղորդակցության բաժնի պետ Կարստեն Զանգենբերգի (Դանիայի վիճակագրական արտադրանքի տարածման քաղաքականությունը թեմայով) հետ:

Նշումներ և առաջարկություններ

Հարմոնիզացված սպառողական գների ինդեքսը (ՀՍԳԻ) Հայաստանի համար մշակվում է գործող ազգային ՍԳԻ-ից: ԱՊ փորձագետները ազգային ՍԳԻ-ի մեթոդաբանությունը համարում են բավականին հուսալի, որը միայն ենթակա է որոշ չնչին բարեփոխումների: ՀՀ ԱՎԾ-ում ՍԳԻ-ի արտադրությունը շատ լավ է կազմակերպված, ինչը նաև վերաբերվում է համապատասխան տվյալների հավաքագրմանը տարածքային գործակալությունների կողմից:

ՀՍԳԻ-ի վերաբերյալ պահանջները և ԱՊ փորձագետների առաջարկությունները, որոնք իրականացվել են միայն ու միայն սույն ծրագրի ընթացքում, միաժամանակ դրական ազդեցություն կունենան նաև ազգային ՍԳԻ-ի որակի վրա:

Սույն բաղադրիչի պարտադիր արդյունքներին կարելի է հասնել այն առումով, որ ՀՍԳԻ-ն կհաշվարկվի, սակայն չի հրապարակվի: Մեթոդաբանությունը կփաստաթղթավորվի և հասկացված կլինի, սակայն Հայաստանում լիարժեք ՀՍԳԻ ամբողջական մշակման համար, որը հնարավոր կլինի հրապարակել, կպահանջվի առնվազն ևս մեկ տարի:

Պետք է նշել, որ ՀՀ ԱՎԾ-ի ծրագրերը ՀՍԳԻ-ի վերաբերյալ բավականին ձգտողական են և ԱՊ փորձագետների տեսանկյունից իրատեսական չի թվում սույն Թվինինգ ծրագրի շրջանակներում հասնելու ԵՄ հիմնական չափանիշների և պահանջների համապատասխանությանը: Միջանկյալ ՀՍԳԻ-ի հաշվարկներ սկսելու համար առնվազն անհրաժեշտ է ունենալ SS սպառման համապատասխան կառուցվածքը, ինչի հիման վրա կհաշվարկվեն ՀՍԳԻ-ի կշիռները, վերանայված դիտարկվող ապրանք-ծառայությունների ցանկը և դրանց գնային տեղեկատվությունը (բազային և ընթացիկ ժամանակահատվածների համար), ԱՍԴՆ/ՀՍԳԻ դասակարգիչը, միասնական ինդեքսի հաշվետու ժամանակահատվածը և ընդհանուր գների հաշվետու ժամանակահատվածը: ՀՍԳԻ-ի նվազագույն չափանիշների և հիմնական պահանջների իրականացման գործընթացը արագացնելու համար, ինչպես նաև միջանկյալ ՀՍԳԻ-ի հաշվարկ սկսելու համար անհրաժեշտ է գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնում ավելացնել աշխատակիցների թվաքանակը (առնվազն ևս երկու աշխատակիցներով) և հզորացնել տեխնիկական կարողությունները : Տվյալների հավաքագրման վերակազմակերպման գործընթացն արդեն սկսվել է և այն հնարավորություն կտա լուծելու երկու լրացուցիչ աշխատակիցների անհրաժեշտության հետ կապված խնդիրը:

<<Միջանկյալ>> ՀՍԳԻ-ն կամ փորձնական ՀՍԳԻ-ն, որը կհաստատվի մինչև սույն Թվինինգ ծրագրի իրականացման ժամանակահատվածի ավարտը, հիմնված կլինի լիակատար մշակված համակարգի վրա, սակայն մասնակիորեն որոշակի նախնական տվյալների կիրառմամբ: Թվինինգ ծրագրի ավարտից հետո սույն նախնական տվյալները աստիճանաբար կփոխարինվեն համապատասխանաբար ընթացող մեթոդաբանության առանձին տարրերի մշակմամբ և իրականցմամբ:

ԱՊ փորձագետները նշել են, որ Թվինինգ ծրագրի իրականացման ավարտից հետո անհրաժեշտություն կլինի որոշակի լրացուցիչ աջակցության՝ վերջնական արտադրանքի որակի ապահովման համար: ՀՀ ԱՎԾ-ի համար անհրաժեշտ կլինի հետագա տեխնիկական աջակցության ցուցաբերումը և ԵՄ օրենսդրության փոխանցումը ազգային վիճակագրական միջավայր, և այն ապագայում հնարավոր է իրականացնել տարբեր գործիքներով (օրինակ՝ TAIEX):

Չի ակնկալվում, որ ՀՍԳԻ-ն փոխարինելու է գործող ազգային ՍԳԻ-ին, քանի որ երկու ինդեքսները տարբեր նպատակներ են հետապնդում: Կան որոշակի տարբերություններ սահմանումներում, օրինակ օտարերկրացի քաղաքացիների կողմից կատարված սպառումները ՀՍԳԻ-ում ներառելը (օտարերկրացի քաղաքացիների կողմից կատարված սպառումների, կազմի և կառուցվածքի վերաբերյալ ցուցանիշներ ունենալու համար անհրաժեշտ է իրականացնել միանվագ ֆոկուս հետազոտություն): Սակայն քանի որ ՍԳԻ-ի համար հավաքագրվող գնային և այլ ցուցանիշների մեծ մասը համատեղելի են ՀՍԳԻ-ի հաշվարկման համար, հետևաբար այդ երկու ինդեքսները խիստ փոխկապակցված կլինեն:

ՀՀ Կենտրոնական բանկը և այլ կարևոր շահառուներ որպես ՍԳԻ-ի սպառողներ, կհրավիրվեն Թվինինգ ծրագրի շրջանակներում իրականացվելիք մեկօրյա սեմինարի առաջին մասին ներկա գտնվելու համար: Սա հնարավորություն կտա ՀՀ ԱՎԾ-ին, ԱՊ փորձագետների աջակցությամբ ներկայացնելու այն իրականացված վերլուծությունները, որոնք ցույց կտան, որ գնադիտարկումների քանակի նվազեցումը արդարացված կլինի. այսինքն՝ այն որևէ ազդեցություն չի ունենա գործող ազգային ՍԳԻ-ի որակի վրա:

Ուսումնական այցելությունը հնարավորություն տվեց ծանոթանալու ՍԳԻ-ի և ՀՍԳԻ-ի հաշվարկման Դանիայի փորձին, մեթոդաբանական ժամանակակից սկզբունքներին: Այն կնպաստի Հայաստանում Եվրոստատի կողմից մշակված և Եվրամիության երկրներում

կիրառվող ՀՍԳԻ-ի մեթոդաբանության մշակմանը ու ներդրմանը, ՍԳԻ-ի հետագա կատարելագործմանը, ինչպես նաև գների վիճակագրության բարելավմանը:

Կից հավելված 1-ում արտացոլված է բաղադրիչի աշխատանքային ծրագրի արդիականացված տարբերակը:

Հավելված 1 Տեխնիկական առաջադրանք

Գործունեություն Ե. 5 Ուսուցողական այցելություն Դանիայի ՀՍԳԻ ուսումնասիրումը

1. **Գործունեության նպատակը**

Գործունեության նպատակն է Դանիայի ՀՍԳԻ վիճակագրության համակարգի ցուցադրումը և քննարկումը : Հիմնական շեշտը կդրվի Դանիայի համակարգի զարգացման վրա՝ հաշվի առնելով ՀՀ ԱՎԾ-ի ՀՍԳԻ վիճակագրության հեռանկարները և ապագա զարգացումները:

2. **Գործունեության ակնկալվող արդյունքները**

Գործունեության ակնկալվող արդյունքները հետևյալն են՝

- Դանիայի ՍԳԻ և ՀՍԳԻ վիճակագրության մանրամասն ներկայացումը;
- Դանիայի ՍԳԻ/ՀՍԳԻ վիճակագրության արտադրման աշխատանքային գործընթացների և փուլերի պատկերացում. մեթոդաբանության մշակում և պահպանում, տվյալների հավաքագրում, որակի վերահսկում, տվյալների տարածման ռազմավարություն;
- Քննարկումներ Ազգային հաշիվների բաժնի հետ համագործակցության վերաբերյալ;
- Քննարկել, թե ինչ է իրենից ներկայացնում համագործակցությունը Եվրոստատի հետ, աշխատանքային խմբեր, հանձնարարականներ, և այլն;
- Թվինինգ ծրագրի ՀՍԳԻ բաղադրիչի ներկայիս կարգավիճակի ներկայացում- հնարավոր ճշգրտումներ և առաջիկա քայլերի քննարկումներ

Ուսուցողական այցելության արդյունքները կփաստաթղթավորվեն ուսուցողական այցելության զեկույցում, որը կպատրաստվի և կներկայացվի մասնակիցների կողմից:

Հավելված 2. ՇԵ փորձագետների հանդիպման ծրագիրը (նախագիծ)

Ժամը	Վայրը	Նպատակը/մանրամասները
11 Հունիս, 10:00	Ողջույնի խոսք	Դանիայի Վիճակագրության և շաբաթվա ծրագրի ներկայացում (Յեսփեր Էլիմոս և Լարս Թյուգեսեն)
11 Հունիսի, 13:00	Դանիայի վիճակագրության ՍԳԻ/ՀՍԳԻ ներկայացում Հայաստանում ՀՍԳԻ ներկայացման Թվինինգի բաղադրիչը	Դանիայի ՀՍԳԻ և ՍԳԻ վիճակագրության զարգացման և ներկայիս կարգավիճակի ներկայացումը *(Մարտին Լարսեն)* Ներկայիս կարգավիճակը և վերջին զարգացումները Հայաստանի Գների Վիճակագրության բաժնում *(Գուրգեն Մարտիրոսյան/Քիրստեն Բալլինգ)*
12 Հունիսի, 10:00	Դանիայի վիճակագրությունում գների հավաքագրումը, տվյալների խմբագրումը և որակի հետ կապված աշխատանքները	Գնադիտարկողների աշխատանքի կազմակերպումը, տեխնիկական և այլ սարքավորումներ, գների տվյալների փոխանցումը գնադիտարկողների կողմից Դանիայի վիճակագրությանը: Աշխատանքային գործընթացները սկսած գնային տվյալների հավաքագրումից մինչև ՍԳԻ/ՀՍԳԻ վիճակագրության հրապարակումը *(Մարտին Լարսեն)*
12 Հունիսի, 13:00	Հայաստանում ՀՍԳԻ ներկայացման Թվինինգի բաղադրիչը	Վերակազմակերպած տվյալների հավաքագրման նախնական արդյունքները Հայաստանում: *(Գուրգեն Մարտիրոսյան/Քիրստեն Բալլինգ)*
13 Հունիսի, 09:30	Համագործակցությունը Եվրոստատի հետ և դրա հետևանքները մեթոդաբանության պահպանման և զարգացման համար:	Դանիայի վիճակագրության ներգրավվածությունը ԵՄ ՀՍԳԻ աշխատանքներում աշխատանքային խմբերի, հանձնարարականների և դրամաշնորհային համաձայնագրերի միջոցով: Դանիայի ՀՍԳԻ համար ընդհանուր ռազմավարության մշակում՝ ներառյալ ԵՄ պահանջները: Գների վիճակագրության շտրիխային (Barcode data) տվյալները Եվրոպական համագործակցությունում և Դանիայի Վիճակագրությունում: *(Մարտին Լարսեն/Յոնաս Միկելսեն)*
13 Հունիսի, 12:30	Համագործակցությունը Ազգային հաշիվների բաժնի հետ	Դանիայում համագործակցությունը Ազգային Հաշիվների և Գների Վիճակագրության բաժինների միջև *(Յեսփեր Էլիմոս, Միջազգային խորհրդատվություն)*
14 Հունիսի, 10:00	ՍԳԻ/ՀՍԳԻ վիճակագրության	Փոխանցումը Եվրոստատին: Համագործակցությունը Ազգային սպառողների

	տարածումը Հայաստանում ՀՍԳԻ ներկայացումը Տարածման ռազմավարությունը Դանիայում	հետ (Մարտին Լարսեն) Հայաստանում ՀՍԳԻ ներկայացման վերաբերյալ հաղորդակցության ռազմավարության կարգավիճակը (Գուրգեն Մարտիրոսյան/Քիրստեն Բալլինգ) (Քարստեն Զանգենբերգ, Հաղորդակցության բաժնի պետ)
14 Հունիսի, 13:00	Հայաստանում ՀՍԳԻ ներկայացման Թվինինգի բաղադրիչը: ***Մեթոդաբանական բարելավումներ***	Որակի ճշգրտման մեթոդների առաջընթացը: Կշիռների հաշվարկումը ըստ ՀՍԳԻ չափանիշների և առաջընթացը այս առումով: Հայաստանի ՍԳԻ ընդգրկման բարելավումը և առաջընթացը: *(Գուրգեն Մարտիրոսյան, Քիրստեն Բալլինգ)*
15 Հունիսի, 10:00	Հայաստանում ՀՍԳԻ ներկայացման Թվինինգի բաղադրիչը ***Հետագա քայլերը***	Աշխատանքային ծրագրի քննարկումը և հետագա քայլերը - Առաջընթացը կապված փորձնական ՀՍԳԻ կազմման հետ - Հուլիս ամսին կայանալիք սեմինարի նախապատրաստական աշխատանքների կարգավիճակը (Գուրգեն Մարտիրոսյան/Քիրստեն Բալլինգ)
15 Հունիսի, 13:00	Բրիֆինգ	Այլ հարցեր և ուսուցողական այցելության գնահատում (պրն. Յեսփեր Էլիմոս)